ԳԱՅԱՆԵ ԳԻՆՈՅԱՆ

ՕՏԱՐ ՄԱՐԴԻԿ ՔՐԻՍՏՈՖ ՀԱՅՆԻ «ՀՈՐՆԻ ՄԱՀԸ» ՎԵՊՈՒՄ

Ֆաշիզմը աշխարհին առավել հայտնի է եվրոպացի հրեաների հոլոքոստով: Սակայն նրանց ռասիստական ծրագրերի զոհն են դարձել նաև գնչուները և գերմանացի հաշմանդամները: Այս փաստը ցավոք ավելի քիչ է լուսաբանվում և ուշադրության արժանանում:

30-ական թվականների վերջին նացիստների ռասսայական քաղաքականությունը հայտնի դարձավ իր հայտարարություններով անդամալույծների և անբուժելի հիվանդների մասին: Համածայն դրանց այդ հիվանդների վրա ծախսվող գումարը ժողովրդի փողն է, որը կարելի է տնտեսել, եթե այդ հիվանդները մահանան: Նրանց նկատմամբ սկսվեց հետապնդում և զտում ինչպես հրեաների և գնչուների դեպքում: 1939 թվականի հոկտեմբերից սեպտեմբերի մեկով թվագրված փաստաթղթով իրավասություն է տրվում «անբուժելի հիվանդներին» տրամադրել շնորհված մահ»: Այս սպանությունները բնորոշվեցին որպես «շնորհված մահ/Euthanasie»: Ըստ նացիստների այս մարդիկ բեռ էին և պակասավոր, նրանք չէին համապատասխանում ռասսայական իդեալին և ավելորդ էին: «Տ 4 ակցիա» կոչվող այս գործողությունը ղեկավարում էին ֆյուրերի գրասենյակի ղեկավար Ֆ.Բոհլերը և անձնական բժիշկ Կ.Բրանդը: Հիվանդների և անցանկալի տարրերի կազմակերպված զանգվածային սպանդը իրականացնում էին բժիշկները, հիվանդապահները Գերմանիայի մահվան տարբեր հիմնարկություններում: «Տ 4» գործողությունը իրականացնելու համար ստեղծվեցին գաղտնի կազմակերպություններ, որոնք գորշ ավտոբուսներով հավաքում էին այդ հիվանդներին: Մահվան այս հիմնարկներում մինչև 1941 թվականի օգոստոսը ներարկումների և գազախեղդումների միջոցով սպանվեցին մոտ 70000 մարդ: Դիակները վառում էին, որպեսզի հետազոտության միջոցով չպարզվի մահվան պատճառը: Հիվանդների հարազատները գրություն էին ստանում նրանց մահվան մասին: Սակայն զանգվածային սպանդը կասկածներ առաջացրեց ժողովրդի մոտ և «Տ4» գործողությունը գաղտնազերծվեց: 1941թվականի օգոստոսի 3-ին Մյունստերի եպիսկոպոսը քարոզի ժամանակ հրապարակայնորեն դատապարտեց այս սպանդը: Հիտլերը հրամայեց դադարեցնել «Euthanasie» ծրագիրը, բայց դրանից հետո ևս 30000 հիվանդներ սպանվեցին, իսկ գործողությունը կոչվում էր այսուհետ «14$13»: Հիվանդների անձնական գործի վրա նշվում էր 14 կամ

13, որոնք հուշում էին սպանելու ձևը՝ 14-ը նշանակում էր մահվան ճամբար, 13-ը գազախեղդում: Այս հիվանդների թվում էին հոգեկան հիվանդներ, հաշմանդամներ, տուբերկուլյոզով հիվանդներ և հարկադիր աշխատանքին ոչ պիտանի մարդիկ[1]:

Հիտլերը և նացիոնալ-սոցիալիստները հրեաների բնաջնջման հետ ծրագրում և իրականացնում են գնչուների ոչնչացումը: 1939 թվականի հոկտեմբերի կեսերից սկսվեց գնչուների հանդեպ ռասսայական քաղաքականությունը: Հայնրիխ Հիմլերի հրամանով Գերմանիայի և Ավստրիայի գնչուները /սինտի և ռոմա/ իրավունք չունեին հեռանալ իրենց բնակավայրերից: Նրանց տեղավորեցին ճամբարներում, որպեսզի հետագայում տեղահանեն:

1940 թվականի գարնանը սկսվեց գնչուների կազմակերպված տեղահանումը գերմանական ռայխի տարածքից: Նմանատիպ գործողություններ էին կիրառվում նաև Լեհաստանում, Ռումինիայում, Խորվաթիայում և ֆաշիստական Գերմանիայի գրավյալ այլ տարածքներում բնակվող գնչուների հանդեպ: Տեղահանվածները բնակեցվում էին Աուշվից/Օսվենցիմ/ և այլ համակենտրոնացման ճամբարներում, գյուղերում: Նրանք կատարում էին հարկադիր աշխատանք: Գնչուների հանդեպ կիրառվող տեղահանման, զտման և ապա գազախցերում ոչնչացման ծրագրերը ողջունում էին շատ բարձրաստիճան գերմանացիներ, որոնց կարծիքով այս գործողությունները լավ հնարավորություն էին Գերմանիայի ռասսայապես ցածրարժեք բնակիչներից ազատվելու համար: Առանձնացված բնակավայրերում և ճամբարներում գնչուների մի մասը զոհ դարձավ տիֆի համաճարակին, իսկ մնացած մասը ողջակիզվեց գազախցերում: Ըստ վերջնական տվյալների մոտ 220000-ից մինչև 500000 գնչուներ զոհ դարձան նացիստների կողմից ծրագրված սիստեմատիկ սպանդին, որը այդ ազգի թվաքանակի համեմատությամբ մեծ թիվ է կազմում[2]:

Ի տարբերություն հրեաների հոլոքոստի այս հանցագործությունը մեծ մասամբ լռության է մատնվում կամ էլ դրա մասին քննարկումները ճնշվում են: Միայն 80-ական թվականներին է սկսվում բացահայտ քննարկվել այն փաստը, որ գնչուների հանդեպ նույնպես իրականացվել է մասսայական սպանություն, ոչնչացում գազախցիկներում, հարկադիր աշխատանք, կատարվել են բժշկական փորձեր և այլ տեսակի գործողություններ, որոնց նպատակն էր ոչնչացնել, բնաջնջել Գերմանիայում բնակվող գնչուներին:

Իսրայելցի պատմաբան Գիլադ Մարգալիտը «Հետպատերազմյան գերմանացիները և «իրենց գնչուները»: Վերաբերմունքը սինտիների և ռոմաների հանդեպ Աուշվիցի քողի ներքո»/2001/ գրքում գրում է, որ դաշնակից պետու-

---

[1] www.dhm.de/lemo/html/wk2/holocaust/euthanasie/index.html
[2] www.dhm.de/lemo/html/wk2/sintiroma/index.html

թյունները երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ճանաչել են գնչուներին որպես ռասսայապես հետապնդվածներ, բայց առանձնապես չեն հետաքրքրվել նրանց հետագա ճակատագրով, իսկ գերմանական իշխանությունները կարճատև ընդմիջումից հետո շարունակել են գնչուների դեմ պայքարը, որը կար դեռևս 1933 թվականը:

Պատերազմի զոհերին և հետապնդվածներին Գերմանիան փոխհատուցում է վճարում, սակայն եթե հրեաների փոխհատուցումը միանգամայն բնական է համարվում, ապա գնչուներին բոլոր տեսակի փոխհատուցումները մերժվում կամ մասնակի են տրվում: Ինքը Մարգալիտը դեմ է հրեաների և գնչուների փոխհատուցման համեմատությանը: Որպես կանոն հրեա զոհերի հանդեպ փոխհատուցումը կատարվում էր արագ և բարձր էր, որովհետև դրանով գերմանական պետությունը ուզում էր բարելավել իր վնասված հեղինակությունը աշխարհում: Եվ Մարգալիտը կասկած է հայտնում, թե նրանք ովքեր հետաքրքրվում են գնչուների հետապնդումով, փորձում են խուսափել հրեաների ողջակիզման թեմայից կամ նպատակ ունեն հավասարեցնել այդ երկու իրողությունները:

Գնչուները, որոնք իրենց անվանում են «սինտի» և «ռոմա», Մերձավոր Արևելք են եկել Քրիստոսի ծննդից 1000 տարի հետո, իսկ Գերմանիա 15-րդ դարում: Այդ մասին առաջին վկայությունները 1544 թվականին լույս տեսած Սեբաստիան Մյունստերի «Կոսմոգրաֆիա» գրքում են, որի համար աղբյուր են ծառայել Ա.Կրանցի/1520/ և Յ.Ավեստինոսի/1522/ տարեգրքերը:

Գերմանիայում բնակություն հաստատած գնչուները մկրտված քրիստոնյա են, նրանց 90 տոկոսը կաթոլիկ են, բայց եկեղեցին լռության է մատնել նացիստների կողմից իրականացված գնչուների տեղահանումը և բնաջնջումը: Այս անտարբերությունը պայմանավորված է գերմանացի աստվածաբանների աշխատություններում գնչուների մասին կարծիքով: Մարտին Լութերը իր «Կեղծ թափառաշրջիկները»/1528/ գրքում դատապարտում է թափառաշրջիկներին, որոնք ողորմություն են խնդրում աշխատելու փոխարեն, խաբում են և ստում: Իսկ մեկ այլ «Հրեաների և նրանց ստերի մասին»/1543/ գրքում Մ.Լութերը կոչ է անում քանդել հրեաների սինագոգները և բնակարանները, որվհետև հրեաները «ինչպես գնչուները մեր երկրի տերերը չեն: Այլ թշվառությունը:»[3]

Գնչուների մասին տարածված են բազմաթիվ ժողովրդական լեգենդներ և հեքիաթներ: Համաձայն այդ լեգենդների կա չորս պատճառ, որը արդարացնում է նրանց տեղահանումը և նրանց հանդեպ կրոնապես արդարացված մերժողական վերաբերմունքը: Նախ ըստ այդ լեգենդների գնչուները Կայենի հետնորդներն են, ապա Փարավոն թագավորի թիկնապահներն էին, որոնք

---

[3]Wilhelm Solms:"Kulturloses Volk?" Seeheim.2006.S.47

ափին են մնացել, երբ փարավոնը հրեաներին Կարմիր ծով է լցրել: Երրորդ պատճառը, որ նրանք սուրբ ընտանիքին գիշերելու տեղ չեն տվել, երբ նրանք Եգիպտոս են փախել: Եվ վերջապես նրանք Քրիստոսի խաչի մեխերն են կռել: Այս չորս պատճառներով աստված գնչուներին որպես պատիժ ցրել է ամբողջ աշխարհում և անիծել է, որ նրանք հավերժ թափառեն, և ով տեղահանում է գնչուներին, նա աստծո գործն է կատարում:

Այս բացասական դիրքորոշումը ստիպում է, որ գնչուները բողոքական հյուսիսային բնակավայրերից տեղափոխվեն կաթոլիկ հարավ, հատկապես Բադեն, բայց նրանք իրենց ապահով չէին զգում նաև կաթոլիկ գերմանացիների մեջ: Դրա պատճառը 16-րդ դարում կաթոլիկ եկեղեցու զտումներն էին, որով եկեղեցին ձգտում էր բողոքականների և այլ դավանանքների դեմ պայքարել: Իսկ գնչուները լինելով մկրտված կաթոլիկներ, պահպանում էին իրենց ավանդական ծեսերը, որի համար կասկածվեցին որպես հերետիկոս:

19-րդ դարում փիլիսոփա, աստվածաբան Ֆ.է.Շլայերմախերը ընդունեց գերմանացի փիլիսոփա Յ.Գ.Հերդերի այն թեզը, թե աստվածն է մարդկանց բաժանել տարբեր ազգերի: Այս թեզը պատճառ է դառնում 19-րդ դարում գերմանացի բողոքականների նացիոնալիզմի աճին, որը հանգում է այն եզրակացությանը, թե գերմանացիները աստծո կողմից ընտրյալ ազգ են: Այս աստվածաբանական նացիոնալիզմը հանգեցնում է 20-րդ դարի սկզբին եկեղեցական և հակաեկեղեցական շարժումների, որոնք էլ որոշակի ազդեցություն են գործում նացիոնալ-սոցիալիստների վերելքի վրա:

Պատերազմից հետո երկու եկեղեցին էլ չեն խոստովանում իրենց մեղքը գնչուների ցեղասպանության մեջ: Միայն 1980 թվականին է ավետարանական եկեղեցին խոստովանում իր մեղքը: Կաթոլիկ եկեղեցին մինչ այժմ չի խոստովանել իր մեղքը, միայն Հռոմի պապը 2005 թվականին Աուշվիցի/Օսվենցիմի/ազատագրման 60-րդ տարեդարձին նվիրված իր ելույթում նշեց, որ ըստ Հիտլերի ծրագրի գնչուները պետք է լրիվ բնաջնջվեին:

Գերմանական գրականության մեջ գնչուների կերպարը հաճախադեպ է, այն կա տարբեր ժամանակաշրջանների և ժանրերի ստեղծագործություններում: Այստեղ նրա կերպարը նույնն է. տգեղ պառավ գուշակուհի և միջնորդ, կավատ, հաղթանդամ ավազակապետ սև մորուքով և սպիտակ ատամներով, երիտասարդ գեղեցիկ պարուհի՝ սև, փայլուն աչքերով և մերկ կամ ցնցոտիապատ երեխաներ:

Գերմանացի գրականագետ Վիլհելմ Զոլմսը իր «Արդյոք անկուլտուրա է այս ժողովուրդը» գրքում հետազոտում է գնչուների թեման գերմանական գրականության մեջ, և նշում, որ առաջին անգամ Հանս Զաքսի «Հինգ աղքատ թափառաշրջիկները»/1539/ ստեղծագործության մեջ կարելի է հանդիպել այս կերպարին: Գնչուի այս կերպարը առկա է բարոկոյի ժամանակաշրջանում

Հ.Յ.Գրիմելսհաուզենի «Քաջություն»/1670/վեպում, Յ.Վ. ֆոն Գյոթեի «Գյոտց ֆոն Բեռլիխինգեն»/1771/ ստեղծագործության մեջ և այլն:

Ուսումնասիրելով տարբեր ժամանակաշրջանների և հեղինակների գործերում գնչուի կերպարը, նա հանգում է այն եզրակացության, որ անցյալի այս գրական կերպարները նույնպես աջակցել են գնչուների հետապնդմանը, և որ ժողովրդի մեծամասնությունը անտարբերությամբ է ընդունել գնչուների բնաջնջումը, այն դեպքում երբ հրեաների և հիվանդների բնաջնջումը անհանգստության և բողոքի առիթ է հանդիսացել:

Հոլոքոստը գերմանական ժամանակակից գրականության ամենակարևոր թեմաներից է, բայց այն մասնակի է լուսաբանում նացիոնալ-սոցիալիստների սարսափելի արարքը, քանի որ իր ուշադրությունը բևեռում է համարյա միայն եվրոպացի հրեաների ողջակիզմանը, ուշադրությունից դուրս թողնելով հիտլերի ծրագրով ոչնչացված և բնաջնջված գնչուներին և հիվանդներին:

Այս տեսանկյունից ուշագրավ է գերմանացի ժամանակակից հայտնի գրող Ք.Հայնի «Հորնի մահը»/1985/ վեպը, որտեղ հեղինակը պատմության, անցյալի ու նրա ըմբռնման տարբերությունների թեման քննարկելիս անդրադառնում է հասարակությանը օտար մարդկանց, որոնք են չհարմարվող անհատը, հասարակությունից մերժված տկարամիտը և գնչուները:

Պատմության իմացությունը ըստ հեղինակի կարող է հնարավոր դարձնել ներկայում և ապագայում ապրել, քանզի «նա ով չի ընդունում իր անցյալը, ստիպված է այն կրկնել:»[4] Հեղինակը փորձում է ընթերցողին հասանելի դարձնել այն միտքը, որ դեմոկրատական Գերմանիան և նրա բնակչությունը կային, գոյություն ունեին նաև հիտլերի ժամանակ և նրա իշխանության մասն էին կազմում, հիտլերը ժողովրդի կողմից ընտրված ղեկավար էր, և ոչ թե ուզուրպատոր: Այդ պատճառով պատերազմից հետո որդեգրված այն կանոնը, թե ԳԴՀ-ն ստեղծվել է երրորդ ռայխի փլուզումից հետո, երբ գերմանացիները տանուլ տվեցին այս պատերազմը, սխալ է: Հետևաբար չկա զրոյական կետ, այլ պատմությունը շարունակական է և գերմանացիները պետք է վերլուծեն այս անցյալը, որի մասն է կազմում նաև նացիստական ժամանակաշրջանը, ընդունեն, որ այն իրենց անցյալն է և սովորեն ապրել իրենց անցյալով: Քանզի այս գերմանական երկրում ապրել են և շարունակում են ապրել մարդիկ և պատերազմից առաջ, և հետո: Ք.Հայնը հետագայում նույնպես երկու Գերմանիաների միացումից հետո խոսում է զրոյական կետի դեմ, որը պիտի նպաստեր անցյալից հրաժարվելուն: Վեպում հանդիպում են կերպարներ, որոնք գոհ են նացիստական ժամանակներից, թեև ապրում են նոր սոցիալիստական երկրում: Այդ մարդիկ պատրաստ են նախկինի նման մատնել չհարմարվող անհատներին: Այդ մասին դոկտոր Շպոդեկն ասում է.«Մատնիչները և մարդասպանները

[4] L.Baier:Christoph Hein.Texte.Daten.Bilder.Frankfurt/Main.1990. S.57

ինչ-որ տեղից չեն եկել, որ այս քաղաքին ստիպեն մահվան և արհամարհանքի օրենքները, նրանք այս հեռավոր, իրականությունից կտրված գավառի քաղաքացիներն են եղել, նրանք դուրս են եկել մեր տներից և սողոսկել են մեր մաշկի տակ:»[5] Վեպի կառուցվածքը հիշեցնում է Վ.Ֆոլքների ստեղծագործությունները, որտեղ նույնպես մի քանի կերպարներ են խոսում: Այս ոճը լավագույնս բնորոշում է գերմանացի փիլիսոփա Թ.Ադորնոյի ասույթը.«Շյուղը քո աչքի մեջ ամենալավ մեծացնող ապակին է: Վեպը կուսակցությունից հեռացված պատմաբան Հորնի մասին է, որից ետ է վերցվել նրա գիտական աստիճանը: Նա կորցրել է իր պաշտոնը Լայպցիգի համալսարանում և աշխատում է փոքրիկ Բադ Գուլդենբերգ քաղաքում որպես թանգարանի տնօրեն: Սակայն կուսակցական նոր դատավարություն է սպասվում նրան, որը նա անկարող է դիմադրել և իրեն կախում է անտառում: Ինչպես քաղաքապետ Կրուշկացն է ասում. «Ամենասարսափելի զոհը, որը պահանջում է պատմության ընթացքը անմեղի մահն է: Դա արյունով վճարվող մաքս է, որը վճարվում է առաջընթացի համար»:[6] Ահա սա է վեպի ողջ գործողությունը: Սակայն իրականում սա պատմության շարունակականության մասին կրեդո է:

Դեմոկրատական Գերմանիայում, ինչպես նացիստական Գերմանիայում այլախոհը, գնչուն և տկարամիտը հասարակությունից մերժված, օտար մարդիկ են: Եվ այսպես պատմությունը կրկնվում է, այլախոհը ինքնասպանություն է գործում, հիվանդը փակված է իր տանը, իսկ գնչուները, որոնք այս քաղաք են եկել 1947 թվականից 10 տարի հետո, հեռանում են քաղաքից և այլևս չեն վերադառնում:

Հինգ հերոսներ մենախոսության ձևով տարիների հեռվից վերհիշում են իրենց անցյալը 1957 թվականին ու դրանից առաջ նացիզմի ժամանակներում: Թվում է, թե սա միայն այդ հինգ մարդու կյանքի պատմությունն է, բայց այդ պատմությունների խորքում մի ամբողջ ժողովրդի պատմությունն է ժամանակների երեք հարթությամբ: Պատմությունը ներկայացված է հինգ հոգու տեսանկյունից, դրանով ավելի ցայտուն և պարզորոշ է դառնում իրականությունը, որովհետև դրանք հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ են՝ մտավորական, որը պատմության մութ ստվերից ազատվելու համար իր դեղատոմսն ունի՝ ջնջել, մարել այն հիշողությունից, նոր քաղաքականության ներկայացուցիչ, որը իր կուսակցության պատվիրանների հլու-հնազանդ կամակատարն է, կին, որը կանանց աշխարհի ներկայացուցիչն է, երեխա, որն իր անմեղությամբ տեսածը, իրականությունը, ինչպես որ կա ներկայացնելու հավաստիք է, և վերջապես հիվանդ, որը չնայած գերմանացի է, ազգային պատկանելությանը հակառակ արհամարհված է և մերժված:

---

[5] Ch.Hein:Horns Ende.Berlin und Weimar.2001. S.163
[6] Ch.Hein:Horns Ende.Berlin und Weimar.2001. S.89

Այդ հերոսներն են դոկտոր Շպոդեկը, որն իր մեջ ունի մեծահարուստի որդի և մեծահարուստ լինելու սին պատրանքը, որի ետևում կործանված անհատն է, հասարակության խեղված անդամը: Բարեգործի համբավով նրա հայրը նացիստների հետ լավ կապեր ուներ և հարստացել է փոքրիկ այս քաղաքի հաշվին: Իսկ որդին իր հորից ստորությամբ ոչնչով չի տարբերվում, կյանքում ոչ ոքի չի սիրում, ոչ ոքի կողմից, բացի իր մորից դեռ չի սիրվել, նա ամբողջովին լցված է ատելությամբ և հուսահատությամբ:

Մյուս կողմից քաղաքապետ Կրուշկացն է, որը դեմոկրատական Գերմանիայի ֆունկցիոներին է անձնավորում, որի անձնական կյանքը կործանվում է, փոշիանում՝ հասարակական դիրքը, գաղափարները պաշտպանելիս: Տասնհինգ տարի Բադ Գուլդենբերգի քաղաքապետ աշխատելուց և թոշակի անցնելուց հետո նա հասկանում է, որ իր գործունեությունը. «մի բուռ ծյուն արժեր, որի համար իմ կյանքն եմ տվել: Մի բուռ ծյուն, որ ինձ մնացած կյանքի մի քանի շաբաթներն ու օրերն է կեղտոտում և իմ բերանում դառը համ թողնում:»[7] Երրորդ հերոսը Գերտրուդն է, որը տառապող ու ապրող էակ է, և կյանքի չարիքներին հակառակ ապրելու ցանկություն ունի և գիտի այս քաղաքի, այս երկրի պատմությունը, նրա համար սա իր երկիրն է, իր քաղաքն է և նա չի ուզում հրաժարվել և չի հրաժարվում այստեղ այս քաղաքում, իր կյանքով և իր անցյալի հետ հաշտված ապրելուց:

Հաջորդ կարևոր կերպարը տկարամիտ Մարլենեն է, որը մարմնավորում է նացիստական ժամանակաշրջանի զոհին, որը ողջ է իր մոր անձնազոհության շնորհիվ: Պետությունը հասարակության նման անդամների համար մեկ մահացու դատավճիռ ուներ, նրանց կյանքը անարժեք էր և նրանց հավաքում էին, որպեսզի «ինչպես պաշտոնապես էր ասվում, նրանք չվնասեն առողջ մարդկանց կյանքը»:[8]

Վերջին գործող կամ վերհիշող անձը, որի հետ ամեն գլխի սկզբում երկխոսություն է վարում մահացածը, Թոմասն է՝ 11-ամյա պատանին, որը որպես այս երկրի երիտասարդ սերունդ պարտավոր է իր երկրի պատմությունը վերլուծել, վերհիշել, քննարկել, հանձնել հասարակության դատին, այդ պատմության, այդ անցյալի հետ հաշտվելու համար՝ այդ անցյալից չհրաժարվելով, այդ անցյալից դաս քաղելով: Եվ նա դա անում է պատմաբան Հորնի դասին հետևելով, ըստ որի.

«...մենք նույնպես գրում ենք պատմությունը: Մենք ենք, որ պետք է երաշխավորենք, որ ճշմարտությունը կամ սուտը հաղորդվի... Ճշմարտությունը կամ սուտը, դա մեծ պատասխանատվություն է»:[9] Ամբողջ գիրքն ունի մի

---

[7] Ch.Hein:Horns Ende.Berlin und Weimar.2001. S.188
[8] Ch.Hein:Horns Ende.Berlin und Weimar.2001. S.221
[9] Ch.Hein:Horns Ende.Berlin und Weimar.2001. S.82

հրամայական, որով սկսվում է վեպի յուրաքանչյուր գլուխ, հիշիր, հիշիր այն ինչ կատարվել է, որովհետև դա է անցյալը վերլուծելու, այն հաղթահարելու և նրա հետ հաշտվելու ամենակարևոր միջոցը: Հակառակ դեպքում, եթե չկա հիշողություն, չկա նաև մարդկություն: «Ինչ սարսափելի միտք է, որ ցանկանանք առանց հիշողության ապրել: Մենք ստիպված ենք լինելու ապրել առանց փորձի, առանց գիտելիքի և առանց արժեքների»:[10] «Մահը չի հաշտեցնում, եթե հիշողությունները անհաշտ են մնացել»:[11] Այս տեսակետից հիշողությունը վեպի գլխավոր հերոսն է: Պատմությունը վերհիշում են հերոսները 25 տարի հետո, ժամանակային մեծ հեռավորությունից, որը հուշում է , որ պատմության համար չկա վաղեմության ժամկետ, այն ներկա է, մշտապես մեր կողքին է, մեզ հետ է, մեր ընտանիքում, հասարակության, պետության մեջ է և նրանից հրաժարվելը, մոռացության մատնելը նրանից ազատվելու ելք չէ, այն կհասնի մեզ, կհիշեցնի իր մասին և կստիպի կրկնել այն: Եվ այսպես երբեք ուշ չէ այն քննարկելու, վերլուծելու համար և ասել տեր եմ իմ պատմությանը իր լուսավոր և ստվերոտ կողմերով.

Վեպում ցույց է տրվում. որ այն դեպքում, երբ պաշտոնապես նացիստները չկան, մարդիկ և նրանց գործելակերպը նույնն են մնացել, նրանց մտածելակերպը նացիստական են, նրանք պատրաստ են մատնել մեկը մյուսին:

Մարլենեի կերպարը որպես նացիստական ժամանակների զոհ, մեծ նշանակություն ունի հասարակությանը օտար մարդկանց ամբողջական կերպարի համար: Չնայած տկարամտությանը Մարլենեին ի վերուստ շնորհված է երազներ տեսնել, որոնք նրան զգուշացնում են իրականությունից, և նա մի փոքր ավելի շուտ է տեսնում ճշմարտությունը: Նրա մայրը՝ ուսուցչուհի Գուդրունը, դստերը թաքցրել է նկուղում և նրա փոխարեն հանձնվել է ֆաշիստներին, երբ նրանք հավաքում և ոչնչացնում էին հոգեկան հիվանդներին: Մարլենեն իր մենախոսությունները անցկացնում է երկխոսության ձևով արդեն մեռած մոր հետ: Նա ապրում է իր հոր՝ նկարիչ Գոհլի հետ բոլորովին մեկուսացած և նացիստական ու սոցիալիստական ժամանակների տարբերությունը միայն այն է, որ նրա սպանված մոր գերեզմանաքարին անունը արդեն նշված է: Շրջապատի հետ նրանց միակ կապը իրենց մեկուսացած վիճակում նմանապես մեկուսացած գնչուներն են: Միայն նրանք են այցելում հորը և դստերը, նրանց քաղաք գալուն են սպասում հայր ու դուստր: Գնչուները իրենց անվանում են «ռոմա», որը նշանակում է նրանց լեզվով «մարդիկ»: Ահա այս իսկական մարդիկ են, որ նկարիչ Գոհլին իր օտարացման, մերժվածության և զոհ լինելու կարգավիճակում նման են ու հարազատ: Գնչուները լավ չեն խոսում գերմաներեն, բայց նրանք իրար լավ են հասկանում:

---

[10] Ch.Hein:Horns Ende.Berlin und Weimar.2001. S.281
[11] Ch.Hein:Horns Ende.Berlin und Weimar.2001. S.121

Մարլենեի կերպարում հեղինակը միատեղել է տրոյական Կասանդրային, իմաստուն կնոջը, որը նույնպես երազների միջոցով կանխագուշակում է ապագան: Երազները որպես մարդու ենթագիտակցության և մետաֆիզիկայի կապ են դիտել դեռևս վաղ ռոմանտիզմի ժամանակաշրջանում և ներկայացրել իրենց ստեղծագործություններում Նովալիսը, Բրենտանոն: Այս երազները զգուշացնում են Մարլենեին, որ նրա մայրը երջանիկ է, երջանիկ, որ ինքնազոհությամբ փրկել է իր երեխային և ասում. «որ ես պետք է համբերեմ: Երբևէ կգա օրը»:[12] Այո, կգա ազատության օրը, երբ մարդիկ իրենց մեծությունից կազատվեն:

Պատերազմից հետո գնչուները այլևս ազատ են նացիստական սարսափներից և ոչնչացվելու վախը հաղթահարել են, նրանք ամեն տարի իրենց թափառախմբով գալիս են Բադ Գուլդենբերգ և իրենց վրաններն են խփում քաղաքին մոտիկ մարգագետնում: Բայց նաև հակաֆաշիստ սոցիալիստական ԳԴՀ-ում նրանք մերժված հյուրեր են, որոնց միայն համբերում են քաղաքի բնակիչները և կարոտով են հիշում նացիստական ժամանակները, երբ գնչուները չէին գալիս: Նրանք քաղաքի համար օտար, ամոթալի հյուրեր են: Հասարակությունից մերժված, օտար, մտավորական, այլախոհ Հորնի ինքնասպանությունից հետո գնչուները հեռանում են այս բնակավայրից և այլևս չեն վերադառնում: Գնչուների հեռանալով այս քաղաքից հեռանում է կարծես վերջին մարդկայինը, որովհետև չնայած մնում է խելագար Մարլենեն իր հոր՝ օտարացած և հասարակությունից մեկուսացած նկարչի հետ, բայց քաղաքը վերջնականապես թաղվում է իր քարացած, կարծրացած հարաբերությունների մեջ:

Պատմությունը հիշելու, վերլուծելու խորհուրդն ունի իր մեջ այս ստեղծագործությունը, որը կոչ է մարդկությանը ընդունել անցյալը, տեր կանգնել սեփական պատմությանը, սխալները ճանաչելու և այն ուղղելու պատրաստակամությամբ: Իսկ պատմության առաջ բոլոր ժողովուրդները նույն իրավունքներն ունեն, հոլոքոստի զոհ հաշմանդամները, գնչուն, հրեան և եղեռնի զոհ հայը: Միայն այս նախապայմանով մարդկությունը կարող է առաջ գնալ, հակառակ դեպքում չենք կարող խուսափել պատմության կրկնությունից ու այդ պատմությունից հրաժարվելու հետևանքով ինքնությունը կորցրած, հասարակությանը օտարացած, ինքն իր մեջ ներփակված, մեկուսացած անհատներից:

Եվ այսպես հետևենք դոկտոր Շպոդեկի խորհրդին, որը մինչև իր մահը ուզում է ժամանակագրի նման պատմությունը գրի առնել, հիշել, որպեսզի «լռությամբ չսաստկացնեմ մեր բոլորի ստորությունը և մեղսակից չդառնամ:»[13] Իսկ եթե մենք լռենք, ապա. «քարերը կաղաղակեն»:[14]

---

[12] Ch.Hein:Horns Ende.Berlin und Weimar.2001. S.40
[13] Ch.Hein:Horns Ende.Berlin und Weimar.2001. S.166
[14] Ch.Hein:Horns Ende.Berlin und Weimar.2001. S.301